ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱՐ-ԴՈՍԻ «ԵՍ ԵՎ ՆԱ» ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԽՈՒՄԲ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԻԼԻԹ ՄԱՐԿՈՍՅԱՆ

2022թ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱՐ-ԴՈՍԻ «ԵՍ ԵՎ ՆԱ» ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ----------5

ԽՆԴԻՐՆԵՐ----------6

ՊԱՐԱԳԱՆԵՐ----------11

ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ----------16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------18

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------19

Ներածություն

Ժամանակակից կրթական համակարգում անհրաժեշտություն է առաջացել նորովի մոտեցում ցուցաբերել լեզվական այս կամ այն նյութը աշակերտներին հասանելի ու հասկանալի դարձնելու հարցերում: Նոր տեխնոլոգիաների ու համացանցի օգտագործումը զգալիորեն ընդլայնել են ուսումնական նյութի որոնման, հաղորդման և յուրացման հնարավորությունները:

Նորագույն տեխնոլոգիաներն ու համացանցը, տեխնիկայի ու գիտության սրընթաց զարգացումը նոր խնդիրներ են դրել կրթության և այն իրականացնողների՝ ուսուցչի առջև: Ներկայումս ուսուցչին վերապահվող կարևորագույն խնդիրներից մեկը կրթության բովանդակության կազմակերպումն է, որը, վերոնշյալ հիմնավորումից ելնելով, հիմնավոր փոփոխության կարիք ունի:

Ցանկացած լեզվական նյութի մատուցում պիտի լինի աշակերտակենտրոն ու պիտի նպաստի աշակերտների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների, ինչպես նաև վերաբերմունքի, արժեքային համակարգի ձևավորմանն ու զարգացմանը:

Սույն հետազոտական աշխատանքի թեման է՝ «Բայական անդամի լրացումները և նրանց գործածության առանձնահատկությունները Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքում»: Թեման արդիական է այն առումով, որ աշակերտները, իրենց առօրյա խոսքում կամ հայոց լեզվի դասաժամերին անընդհատ առնչվելով բայական անդամի լրացումներին, պիտի հստակ ճանաչեն ու տարբերակեն դրանք, դրանց արտահայտությունները, գործածության առանձնահատկությունները և հարկ եղած դեպքում կիրառեն ճիշտ՝ խուսափելով խնդրառական, լեզվական սխալների ու կանոնների անհամաձայնությունից:

Աշխատանքի նպատակն է ձևավորել բայական անդամի լրացումները տարբերակելու, ցանկացած տեքստում կամ խոսքում դրանք ու դրանց արտահայտ-

ման ձևերը ճանաչելու կարողություններ:

Աշխատանքի խնդիրներն են.

1.Աշակերտը ճանաչի նախադասության գլխավոր և երկրորդական անդամները և ճիշտ կիրառի խոսքում:[1]

2.Աշակերտը կարողանա գտնել բայական անդամի լրացումները, որոշի տեսակը:[2]

3.Նախադասությունն ընդարձակի՝ ավելացնելով բայական անդամի լրացումներ:

4.Բացատրի բայական անդամի լրացումների արտահայտությունը և կիրառի գրավոր ու բանավոր խոսքում:

5.Լրացումներն արտահայտի տարբեր խոսքի մասերով, հոլովաձևերով ու կապական կառույցներով:

1.Հանրակրթության պետական առարկայական չափորոշիչների և օրինակելի ծրագրերի նախագիծ /Հայոց լեզու/
https://escs.am/am/news/6717

2.Նույն տեղում

Բայական անդամի լրացումները և նրանց գործածության առանձնահատկությունները Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքում

Նախադասության անդամները լինում են երկու տեսակի՝ գլխավոր և երկրորդական: Գլխավոր անդամները ենթական ու ստորոգյալն են, որոնք նախադասության միջուկն են կազմում: Ենթակայից ու ստորոգյալից բացի նախադասության կազմի մեջ մտնող մյուս բոլոր անդամները կոչվում են երկրորդական անդամներ: Դրանք որպես կանոն լրացնում են կամ գոյականներին՝ անկախ նրանից, թե գոյականները նախադասության ինչ անդամի պաշտոնով են հանդես գալիս, կամ բայերին՝ կրկին անկախ նրանից, թե բայերը նախադասության ինչ անդամի պաշտոնով են հանդես գալիս:[3] Այստեղից էլ տարբերակվում է նախադասության երկրորդական անդամների երկու խումբ՝ գոյականի կամ գոյականական անդամի լրացումներ, որոնք են որոշիչը, հատկացուցիչն ու բացահայտիչը, և բայի կամ բայական անդամի լրացումներ, որոնք են խնդիրներն ու պարագաները: Նախադասության այն անդամը, որն արտահայտված է բայով /դիմավոր կամ անդեմ/, կոչվում է բայական անդամ:

Բայական անդամի լրացումները՝ խնդիրներն ու պարագաները, նախադասության անդամների կապակցման եղանակների տեսանկյունից միմյանց հետ կապակցվում են խնդրառությամբ: Խնդրառությունը /հոլովառությունը/ նախադասության անդամների կապակցման եղանակ է, որի դեպքում կապակցվող անդամներից մեկը պահանջում, պայմանավորում է մյուսի քերականական ձևը: Բացի խնդիրներից ու պարագաներից, այդպես են կապակցվում նաև կապն ու կապի խնդիրը /կապի միջոցով ստորոգյալին կապակցվող բառը/: Կապային կապակցություններով կարող են արտահայտվել թե՛ խնդիրները, թե՛ պարագաները:

3.Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1987, էջ 191



Խնդիրներ

Խնդիրները բայական անդամի այն լրացումներն են, որոնք ցույց են տալիս գործողության հետ կապ ունեցող առարկաներ կամ որպես առարկա մտածվող երևույթներ, հատկանիշներ:[4] Սրանք պատասխանում են առարկայական հարցերի՝ ի՞նչ/եր/, ինչ/եր/ի՞, ինչ/եր/ի՞ն, ինչ/եր/ո՞վ, ո՞ւմ, ումի՞ց, ո՞ւմ կողմից, ումո՞վ:

Խնդիրները բաժանվում են երկու խմբի՝ ուղիղ և անուղղակի: Անուղղակի խնդիրներն են՝ հանգման, ներգործող, միջոցի, անջատման, միասնության, վերաբերության: Ս. Աբրահամյանը առանձնացնում է նաև մասնավորման անուղղակի խնդիր:[5]

Մինչ պարագաներին անդրադառնալը ներկայացնենք խնդիրներն առանձին-առանձին ու ցույց տանք նրանց գործածությունն ու արտահայտությունը Նար-

---

4.Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, Լույս, 1975, էջ 292

5.Նույն տեղում, էջ 301

Դոսի «Ես և նա» պատմվածքում:

Ուղիղ խնդիրը, որը ցույց է տալիս այն առարկան, որն իր վրա ուղղակիորեն կրում է ենթակայի կատարած գործողությունը, դրվում է հայցական հոլովով և պատասխանում է ու՞մ և ի՞նչ հարցերին: Ուղիղ խնդիր պահանջում են ներգործական սեռի բայերը: Այն հիմնականում արտահայտվում է գոյականով, առարկայանիշ դերանուններով և գոյականաբար գործածված այլ խոսքի մասերով: Պատմվածքում ուղիղ խնդրի գործածությունը հաճախադեպ է:

Ահա օրինակներ **գոյականով.** Կրկնե՞մ արդյոք սիրո այն ***խոսքերը***….[6] (96) Երկու ***գույն*** էր սիրում-կարմիր և սպիտակ….(102)

Դերանուններով. Ես սիրում էի ***նրան***: (96) Կյանքի ճահիճը կամաց-կամաց ծծում էր ***ինձ***, և ես չէի նկատում ***այդ***: (99)

Ուղիղ խնդիրը որոշ տողերում հանդես է եկել նաև որպես երկրորդական նախադասություն բարդ ստորադասական նախադասության կազմում: Ահա՝ Բայց նորից սիրել նրան, ***ով խաղում է ուրիշի նվիրական զգացմունքների հետ, ով տարբերություն է դնում վերևի ու ներքևի միջև***, ավա՜ղ, սինյորա, ես չեմ կարող: (108) ….Փորձեցի հիշեցնել նրան, ***թե ով եմ ես***: (100)

Ներգործող անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որի կատարած գործողությունը իր վրա ուղղակիորեն կրում է ենթական: Ներգործող անուղղակի խնդիր պահանջում են կրավորական սեռի բայերը: Այն գերազանցապես դրվում է բացառական, երբեմն՝ գործիական հոլովով, ինչպես նաև սեռական հոլովի ու կողմից կապի կապակցությամբ և պատասխանում է ինչ/եր/ի՞ց, ումո՞վ, ինչ/եր/ո՞վ, ու՞մ կողմից հարցերին: Այս խնդիրը չպետք է շփոթել միջոցի անուղղակի խնդրի

6.Նար-Դոս, Երկեր, Երևան, Սովետական գրող, 1977, էջ 96
/Այս և հետագա բոլոր էջանշումները վերաբերում են նույն ժողովածուին/:

հետ. ներգործող խնդիրը անմիջապես գործողությունը կատարողն է, բայց քերա-
կանորեն ձևավորված է որպես խնդիր և ոչ ենթակա:
Օրինակ՝ Ոգևորված այդ ***ապագայով*** և խրախուսված երջանիկ ***սիրով***՝ պատ-
րաստում էի ավարտական դիսերտացիաս: (97)

Հաջորդ՝ հանգման անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որին տրվում կամ հանգում է մի բան: Այս խնդիրը դրվում է տրական հոլովով կամ կապային կապակցություններով /ընդդեմ, դեմ, վրա/ և պատասխանում է ու՞մ, ինչի՞ն հարցերին: Հանգման խնդիր են պահանջում հասնել, հանգել, մոտենալ, հավասարվել, մերձենալ, նվիրել, տալ, վճարել, դիպչել և այլ բայեր, որոնց քանակը շա՛տ-շատ է: Ահա օրինակներ:

<u>Գոյականով.</u> Սկզբում կարևորություն չտվի այդ ***նամակին:*** (98) Ամենքն անհամբեր սպասում էին նրա ***ելույթին:*** (106)

<u>Դերանունով.</u> Մի անգամ երես առ երես հանդիպեցի ***նրան:*** (99)

<u>Կապային կառույցով.</u> ….անդադար բարձրանալ, մինչև որ իր ձեռակերտ ապարանքի բարձունքից ***ինձ վրա*** նայող քմահաճույքն ինքը գար իմ անձեռակերտ բարձունքի առջև ծնրադրելու: (108)

Այս օրինակում հանգման խնդիրը հանդես է եկել իբրև ստորոդաս նախադասություն բարդ ստորադասական նախադասության կազմում:
….բայց այն ժամանակ լիովին հավատում էի, ***որ չի կեղծում:*** (97)

Պատմվածքի էջերում կարելի է հանդիպել նաև անջատման անուղղակի խնդրի օրինակներ: Այս խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որից անջատվում, ծագում կամ սերում է գործողությունը: Այն դրվում է բացառական հոլովով և պատասխանում է ումի՞ց, ինչ/եր/ի՞ց հարցերին: Անջատման խնդիր պահանջում են հեռանալ, անջատվել, բաժանվել, թաքնվել, խուսափել, զրկել, ձանձրանալ, հրաժարվել և այլ բայեր:

Ահա **դերանունով** արտահայտված օրինակներ:

….և երդվում էր, թե մահն անգամ չի կարող անջատել մեզ ***իրարից:*** (97) Ու տալիս են ազնվազարմ տոհմի մի բարձրաստիճան մարդու անունը, ***որից*** կախված է հազարավոր մարդկանց բախտը: (107)

Դերբայով. Ջուլետտան, պատուհանին գամված, չէր հագնում ***լսելուց:*** (103)

Միջոցի անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որի միջոցով կամ որով կատարվում է գործողությունը: Այս խնդիրը դրվում է գործիական հոլովով, ինչպես նաև սեռական հոլովի և միջոցով, ձեռքով կապական բառերի կապակցությամբ, պատասխանում է ումո՞վ, ինչ/եր/ո՞վ և ու՞մ միջոցով հարցերին և արտահայտվում է հիմնականում գոյականով, դերանունով:

Գոյականով. ….դիվական անխիղճ ***խոսքերով*** էր վերջացնում իր նամակը: (97) Ես, երևի, երբեք չէի կարող զարդարել նրա ականջները, կուրծքն ու մատները ***շղթաներով ու մարգարիտներով:*** (100)

Դերանունով. ….կարծում էի, թե մի կատակ է այդ, ***որով*** չարաճճին ուզում է զվարճալի մի խաղ խաղալ ինձ հետ կամ փորձել իմ սերը: (98)

Վերաբերության անուղղակի խնդիրը մատնացույց է անում այն առարկան, որի վերաբերմամբ կամ շուրջը կատարվում է գործողությունը: Վերաբերության խընդիրը դրվում է բացառական հոլովով, սեռական հոլովի և մասին, շուրջը, վերաբերյալ կամ վերաբերմամբ կապերի կապակցությամբ: Բացառական հոլովով դրրված վերաբերության խնդիրը անջատման խնդրից տարբերելու համար հարկ է իմանալ, որ վերաբերության խնդիր պահանջում են ասացական բայերը, ինչպես՝ պատմել, ասել, խոսել, մտորել, հայտնել և այլն: Պատասխանում է ումի՞ց, ինչ/եր/ի՞ց, ու՞մ մասին, ինչի՞ վերաբերյալ ու նմանատիպ այլ հարցերի:

Ահա օրինակներ **կապային կապակցություններով.** ….ամերիկյան ամբողջ մամու-

լը խոսում էր այդ նոր փայլուն ***աստղի մասին:*** (106) Բայց այստեղ ինձ այնպիսի մի հուսահատություն էր սպասում, ***որի մասին*** բնավ չէի մտածել: (99)

Եվ, վերջապես, միասնության խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որի հետ, որի ընկերակցությամբ կատարվում է գործողությունը: Անուղղակի այս խնդիրն արտահայտվում է սեռական հոլովի և հետ կապի կապակցությամբ, գործիական հոլովով, հանդերձ կապային կապակցությամբ և պատասխանում է ու՞մ հետ, ինչ/եր/ի՞ հետ հարցերին:

Օրինակներ՝ ….դավաճան աղջիկը մեկնել էր արտասահման իր, ինչպես իմացա, շատ հարուստ ***ամուսնու հետ:*** (99) ….չարաճճին ուզում էր զվարճալի մի խաղ խաղալ ***ինձ հետ:*** (98)

Հետաքրքրական է, որ Հ. Զաքարյանի և Յու. Ավետիսյանի «Հայոց լեզու: Շարահյուսություն» ձեռնարկում սեռական հոլովով և հետ կապային կառույցով ձևավորվում է ոչ թե միասնության, այլ հանգման խնդիրը:[7] Իսկ Ս. Աբրահամյանը իր «Ժամանակակից հայերենի քերականություն» գրքում վերոնշյալ կառույցները համարում է ոչ թե միասնության խնդիր, այլ միասնության պարագա:[8]

---

7. Հ. Զաքարյան և Յու. Ավետիսյան, Հայոց լեզու: Շարահյուսություն, Երևան, Զանգակ 97, 2009, էջ 68

8. Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, Լույս, 1975, էջ 307

Պարագաներ

Պարագաները գործողության կամ եղելության հանգամանքներ ու հատկանիշներ ցույց տվող անդամներն են: Լինում են մի քանի տեսակի՝ տեղի, ժամանակի, ձևի, չափ ու քանակի, նպատակի, պատճառի, պայմանի, հիմունքի, զիջման:[9]

Տեղի պարագան ցույց է տալիս գործողության կամ եղելության տեղը: Պատասխանում է որտե՞ղ, ու՞ր, որտեղի՞ց կամ որտեղո՞վ հարցերին: Արտահայտվում է տեղի մակբայներով, դերանուններով, գոյականի տարբեր հոլովաձևերով և կապային կապակցություններով:

<u>Տեղի մակբայներով.</u> Ո՞վ ես դու, նայի՛ր ***վերև:*** (102) Դու այլևս ստիպված չես լինի ***փողոցեփողոց*** թափառել մի կտոր հացի համար: (103)

<u>Դերանուններով.</u> ….***որտեղից*** ինձ դուրս բերին թևերիցս բռնած: (100) Բայց ***այստեղ*** ինձ այնպիսի մի հուսահատություն էր սպասում….(99)

<u>Գոյականով</u>. ***Վենեցիայում***….. ապրում էր այդ ընտանիքի միակ զավակը: (101) Այդ օրը ես անցկացրի ***գինետանը***….(100)

<u>Կապային կառույցներով.</u> Երբ ժպտում էր, նրա չքնաղ ***այտերի վրա*** մատնեհարներ էին գոյանում, և փոքրիկ ***բերանի մեջ,*** վարդագույն ***շրթունքների տակ*** շողշողում էին փղոսկրի պես սպիտակ ու ամուր մանրիկ ատամները: (102) Զուլեյտան վազեց ***դեպի*** բաց ***պատուհանը*** և ցած նայեց ***դեպի փողոց:*** (102)

Ժամանակի պարագան ցույց է տալիս գործողության կատարման ժամանակը և պատասխանում է ե՞րբ, երբվանի՞ց հարցերին: Այս պարագան արտահայտվում է ժամանակի մակբայներով, գոյականի տարբեր հոլովաձևերով, կապային կապակ-

---

9.Հ. Զաքարյան և Յու. Ավետիսյան, Հայոց լեզու: Շարահյուսություն, Երևան, Զանգակ 97, 2009, էջ 73

ցություններով, դերբայական ձևերով:

Ժամանակի մակբայներով. Սիրու՞մ էր նա ինձ նույնպես- այդ ես *այժմ* չգիտեմ: (97)….որը շատ-շատ կարող էր միայն *ժամանակավորապես* ընկճել, բայց ոչ *առմիշտ* կործանել մարդու: (101) *Էլ* մի՛ գա: (105) *Այսօր* ես հասա իմ նպատակին: (108)

Դերանունով. Առաջ, *երբ* բնավ չէի կասկածում նրա սիրույն….(98)

Գոյականով. Իսկ երբեմն էլ, մանավանդ *գիշերները* ինձ թվում էր, թե խելագարվում եմ: (98)

Կապային կապակցությամբ. Ու երբ այս խենթացնող *լռությունից հետո* ինչ անելիքս չգիտեի ….(98) *Այն ժամանակ* վերջին կուրսի ուսանող էի….(97)

Ձևի պարագան ցույց է տալիս գործողության կատարման ձևը, պատասխանում է ինչպե՞ս հարցին և արտահայտվում է ձևի մակբայներով ու դրանց հարաբերակից ցուցական, հարցահարաբերական դերանուններով, որակական ածականներով ու հարակատար դերբայով, գոյականի ու անորոշ դերբայի գործիական հոլովաձևով և կապային կառույցներով:

Ձևի մակբայներով. ….որ այնքան *անխղճորեն* անարգել էր իմ ամենանվիրական զգացումները: (98) Ես երբեք չէի կարող այդքան *շքեղորեն* հագցնել նրան: (100) Ջութակը մերթ կանչում էր *հրամայողաբար*, մերթ խնդրում *աղերսագին*, մերթ խոսում *լալագին*, մերթ հառաչում ու լալիս *հուսահատորեն:* (105)

Դերանունով. *Այսպես* էր վերջանում իտալական սիրավեպը: (108)

Ածականով. Ամբողջ բնությունը ականջ էր դնում այդ հնչյուններին, որոնք *սահուն ու թեթև* թռչում տարածվում էին չորսբոլորը: (104)

Գոյականի ու անորոշ դերբայի գործիական հոլովաձևով. ….մի նամակ ստացա, որի մեջ ապշեցուցիչ անողոք *անկեղծությամբ* գրում էր նա…. (97) Եվ թավշյա

աչքերը ***հիացքով, սիրով ու երջանկությամբ*** նայում են պատանի երաժշտի վերասլաց դեմքին: (105) Երբ վերջին հնչյունները ***թրթռալով*** մարեցին….(107) Ապա թղթի մի կտոր, օդի մեջ ***պտտվելով***, ցած ընկավ պատանի երաժշտի ոտքերի առջև: (105)

<u>Հարակատար դերբայով.</u> Ջուլետտան ***բարկացած*** հեռացավ պատուհանից: (103) Այդ օրը ես անցկացրի գինետանը, որտեղից ինձ դուրս բերին թևերիցս ***բռնած:*** (100)

<u>Կապային կառույցներով.</u> Սքանչացման արցունքը ***գոհարի պես*** խաղում էր նրա աչքերի մեջ: (102) ….որ միջնադարյան ***տրուբադուրի նման*** շրջում էր քաղաքից քաղաք: (106)

Չափ ու քանակի պարագան բայական անդամի այն լրացումն է, որը ցույց է տալիս գործողության կատարման չափը, աստիճանը: Պատասխանում է որքա՞ն, ինչքա՞ն կամ ի՞նչ չափով հարցերին: Արտահայտվում է չափ ու քանակի մակբայներով կամ նրան հարաբերակից դերանուններով, չափ, կշիռ, արժեք ցույց տվող գոյականների հայցական ու գործիական հոլովաձևերով, կապային կապակցություններով, թվական կամ չափի իմաստ պարունակող բառերի կապակցություններով:

<u>Չափի մակբայներով</u>. Ես ***շատ*** հպարտ եմ, սինյորի՛նա: (103) Ըստ երևույթին, նա ***սաստիկ*** վախեցավ այդ անակնկալից և, ինչպես նկատեցի, սկզբում ***բնավ*** չճանաչեց ինձ: (100) Դա վրեժի թույնն էր, որ սպառնում էր պայթելու այն աղջկա գլխին, որ ***սպառասպուռ*** ջախջախել էր բոլոր հույսերս, իմ ամբողջ ապագան: (98)

<u>Դերանուններով</u>. Ու վճռեցի անողոք լինել դեպի նա ***նույնքան, որքան*** անողոք եղավ նա դեպի ինձ: (98) Հուսալքումը նորից եկավ տիրեց ինձ նոր թափով և այնքան ուժեղ, ***որքան*** վրեժի զգացումս մնացել էր անհագուրդ: (99)

<u>Բառակապակցություններով.</u> ….տեսնելով, որ նա, ***ծայր աստիճան*** շփոթված, չի

կարողանում աչքերը վեր բարձրացնել: (108) ….պատուհանի մի փեղկը ***կիսով չափ*** բացվեց: (105)

Նպատակի պարագան ցույց է տալիս գործողության կատարման նպատակը, պատասխանում է ինչու՞, ինչի՞ համար, ի՞նչ նպատակով հարցերին և արտահայտվում է գոյականի ու առավելապես անորոշ դերբայի տրական հոլովով, ինչպես նաև կապային կապակցություններով /համար, նպատակով, հանուն/: Հիմնականում նպատակի պարագա է դառնում անորոշ դերբայի տրական հոլովով ձևավորված դերբայական դարձվածը, ինչպես օրինակ՝

Եվ ամեն ոք շտապում էր դեպի կուլիս՝ ***անձամբ սեղմելու երիտասարդ հանճարի ձեռքը*** և ***իր հիացքն ու շնորհակալությունը հայտնելու նրան:*** (107) ….այնպիսի մի դատարկություն էի զգում շուրջս ու ներսս, որ կարծես ուղեղս հանել էին գանգիցս և ինձ նետել մի անապատ՝ ***թափառելու սոսկալի ամայության մեջ:*** (98)

<u>**Կապային կապակցություններով.**</u> ….որի վերնագիրը, սակայն, դնում եմ «Նա»՝ պատմվածքի հերոսին ինձ ***հակադրելու համար:*** (101) Ուժեղ ցնցումներ էին պետք՝ ինձ այդ անտարբերությունից ու անզգայությունից ***հանելու համար:*** (99)

Պատճառի պարագան ցույց է տալիս գործողության կատարման պատճառը, պատասխանում է ինչի՞ց, ի՞նչ պատճառով հարցերին և արտահայտվում է բացառական հոլովով, կապային կապակցություններով, ինչպես օրինակ՝

Այժմ էլ, երբ հիշում եմ այդ մոմենտները, քիչ է մնում ճչամ հոգեկան կարեվեր մի ***ցավից.*** (97) ….որ կարծես կայծակնահար գամվեցի տեղնուտեղս նրա առջև և ***ապշությունից*** ծափ զարկեցի ակամա: (100) ….այստեղ ես էի- կամազուրկ, փափկամարմին մի ինտելիգենտ, որ առաջին իսկ ***հարվածից*** ընկնում է այլևս չելնելու համար: (101)

Պայմանի պարագան ցույց է տալիս գործողության կատարման պայմանը և

պատասխանում է ի՞նչ պայմանով, ո՞ր դեպքում հարցերին:

Հիմունքի պարագան ցույց է տալիս գործողության կամ եղելության կատարման հիմունքը և պատասխանում է ինչի՞ հիման վրա, ի՞նչ հիմունքով և այլ հարցերի:

Հակառակ հիմունքի կամ զիջման պարագան ցույց է տալիս, որ գործողությունը կամ եղելությունը կատարվում է հակառակ այս կամ այն հիմունքի, կամ էլ մի գործողության փոխարեն կատարվում է մի ուրիշը: Պատասխանում է ինչի՞ փոխարեն, չնայած ինչի՞ ու նման այլ հարցերի:[10]

Պարագաներն պատմվածքում հաճախ հանդես են եկել ստորադաս նախադասության դերով բարդ ստորադասական նախադասության կազմում:

<u>Ժամանակի պարագա ստորադաս նախադասություն.</u> ***Երբ ժպտում էր,*** նրա չքնաղ այտերի վրա մատնեհարներ էին գոյանում: (102)

<u>Պայմանի պարագա ստորադաս նախադասություն.</u> ***Եթե ձեր այս նամակը չըլիներ***, ես թերևս այն չէի լինի, ինչ որ եմ այժմ: (108)

<u>Չափի պարագա ստորադաս նախադասություն.</u> Ու վճռեցի անողոք լինել դեպի նա նույնքան, ***որքան անողոք եղավ նա դեպի ինձ:*** (98)

<u>Պատճառի պարագա ստորադաս նախադասություն.</u> ….և աշխատեմ մոռանալ իրեն, ***որովհետև ինքն ուրիշի կինն է լինելու:*** (97)

<u>Նպատակի պարագա ստորադաս նախադասություն.</u> Այս հեռագիրը տվել էր, երևի, նրա համար, ***որ այլևս չձանձրացնեմ իրեն նոր նամակներով:*** (98) Շունչը պահել էր, ***որ ոչ մի հնչյուն չթոցնի:*** (102)

10.Հ. Զաքարյան և Յու. Ավետիսյան, Հայոց լեզու: Շարահյուսություն, Երևան, Զանգակ 97, 2009, էջ 73

Բայական անդամի լրացումների ուսուցման առանձնահատկությունները

Ամփոփելով բայական անդամի լրացումների գործածության դեպքերի քննարկումը՝ անցնենք դրանց ուսուցման առանձնահատկություններին:

Բայական անդամի լրացումների ուսուցման գործընթացում պիտի շեշտադրվեն սովորողների որոնողական-հետազոտական աշխատանքները և նրանց ինքնուրույնության խթանումը: Աշակերտներին սովորական շարահյուսական վերլուծությունից բացի պետք է առաջարկել նաև խմբագրական, ստեղծագործական բնույթի առաջադրանքներ՝ քերականական գիտելիքների կիրառումով:

Բայական անդամի լրացումների ուսուցման գործընթացում կարելի է կիրառել մի շարք ժամանակակից մեթոդներ, ինչպիսիք են՝ T-աձև աղյուսակ, հինգրոպեանոց շարադրանք, մտագրոհ, Վենի դիագրամ, ԳՈՒՍ և այլն:

Վենի դիագրամի միջոցով կարելի է գտնել ու առանձնացնել խնդիրների ու պարագաների նմանություններն ու տարբերությունները՝ նշելով, որ դրանք ինչպես ընդհանուր են բային կամ բայական անդամին լրացնելու տեսանկյունից, այնպես էլ տարբեր են այդ նույն բային կամ բայական անդամին տարբեր տեսանկյուններից լրացնելու հատկությամբ: Իսկ ահա ԳՈՒՍ մեթոդի միջոցով կարելի է ուսուցանել, ենթադրենք, ձևի պարագան: Առանց թեմայի մասին նախապես տեղեկատվություն հաղորդելու՝աշակերտներին հանձնարարել լրացնել իրենց տրամադրած ԳՈՒՍ աղյուսակի ԳԻՏԵՄ սյունակը: Այստեղ աշակերտը, արդեն ճանաչելով տեղի ու ժամանակի պարագաները, կարող է լրացնել, որ ձևի պարագան ցույց է տալիս գործողության կատարման ձևը և կարող է արտահայտվել ձևի մակբայներով: Ապա ՈՒԶՈՒՄ ԵՄ ԻՄԱՆԱԼ սյունակում լրացնի, թե էլ ինչպես կարող է արտահայտվել ձևի պարագան, և, վերջապես, ՍՈՎՈՐԵԼ ԵՄ սյունակում դասագրքի համապատասխան թեման ինքնուրույն ուսումնասիրելուց հետո լրացնի նոր սովորած գիտե-

լիքները վերոնշյալ պարագայի մասին:

Թեման հնարավորություն է տալիս համագործակցային ուսուցում ապահովելու համար դասարանը բաժանել խմբերի ու տարատեսակ վարժություններով ու առաջադրանքներով ամրապնդել ու ամփոփել թեմայի ուսումնասիրությունը:

Քանի որ ունենք խնդիրներ ու պարագաներ, որոնք նույն հոլովով են դրվում, դրանց ուսումնասիրությունից հետո ամփոփման ու ամրապնդման նպատակով կարելի է առաջարկել բառաշարք ու պահանջել դրանցից մի քանիսի բացառական հոլովը կիրառել անջատման, վերաբերության, ներգործող խնդիրներ և տեղի, ժամանակի, պատճառի ու հիմունքի պարագաներ կազմելու համար: Ապա նույն պահանջով առաջարկել «Ես և նա» պատմվածքից գտնել ու դուրս հանել բացառականով դրված խնդիրների ու պարագաների օրինակներ:

Սովորաբար յուրաքանչյուր թեմայի ավարտին թեման ամփոփելու ու գնահատելու նպատակով ես կիրառում եմ հետևյալ մեթոդական հնարը: Նախապես յուրաքանչյուր աշակերտի համար պատրաստում եմ բլից հարցեր և դասն սկսում դրանցով՝ ստուգելով աշակերտների կողմից թեմայի յուրացման աստիճանը, նրանց ուշադրությունը, հարցերին արագ ու ճիշտ պատասխանելու կարողությունը: Օրինակներ ընտրելով հենց «Ես և նա» պատմվածքից՝ կազմում եմ այսպիսի հարցեր.

1/Ո՞րն է ուղիղ խնդիրը հետևյալ նախադասության մեջ. Կրկնե՞մ արդյոք սիրո այն խոսքերը....

2/Ինչո՞վ է արտահայտված չափի պարագան հետևյալ նախադասության մեջ. Հուսալքումը նորից եկավ տիրց ինձ նոր թափով:

3/Ի՞նչ խնդիր կա տրված նախադասության մեջ. Ջուլետտան մի դրամ նետեց նրա ոտքերի առջև:

Հաճախ էլ առաջարկում եմ աշակերտներին կազմել նման հարցեր իրենց դասընկերների համար: Նշեմ, որ այս մոտեցումը բավականին ոգևորում է աշակերտներին. նրանք սկսում են պրպտել ու այնպիսի հարցեր նախապատրաստել ընկերների համար, որ վերջիններս դժվարանան պատասխանել:

Գնահատելիս առաջնորդվում եմ ոչ միայն իմ կողմից պատրաստված հարցերին տրված ճիշտ պատասխանների քանակով, այլև իրենց կողմից պատրաստված հարցերի որակով:

Եզրակացություն

Բայական անդամի լրացումներն իրենց կարևոր ու առանձնահատուկ տեղն ունեն նախադասության երկրորդական անդամների շարքում: Դրանք իրենց գործածությամբ ու արտահայտման առանձնահատկություններով յուրահատուկ տեղ են զբաղեցնում Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքում, և այս ստեղծագործությունը հրաշալի նյութ կարող է ծառայել բայական անդամի լրացումներ ուսուցանելու համար:

Այս լրացումների ուսուցումը, յուրացումը պահանջում են բարդ և հետևողական աշխատանք, որի արդյունքում դրանց յուրացումն ու կիրառումը կօգնեն ճիշտ ներկայացնել ասելիքը, հարստացնել բառապաշարը, խուսափել տարածված սխալներից / Օրինակ՝ «Տուն գնալուց հանդիպեց ընկերոջը» ասելու փոխարեն «Տուն գնալիս հանդիպեց ընկերոջը» ասել ու այնքան ասել, որ դառնա «սովորություն»/:

Բայական անդամի լրացումները ճանաչելու ու յուրացնելու շնորհիվ կզարգանա սովորողների բանավոր ու գրավոր խոսքը, կապահովվեն նրանց ճանաչողական, հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական կարողությունների ձևավորումը, զարգացումն ու ամրապնդումը:

Հետազոտության թեմայի ուսումնասիրման արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է, որ աշակերտները լսելուց, դիտելուց ու մտապահելուց բացի ակտիվորեն մասնակցեն, մտածեն, համագործակցեն ու սովորեն՝ զուգակցելով ու ամրապնդելով միջառարկայական կապը հայոց լեզվի և գրականության միջև:

Օգտագործած գրականության ցանկ

1.Հանրակրթության պետական առարկայական չափորոշիչների և օրինակելի ծրագրերի նախագիծ /Հայոց լեզու/
https://escs.am/am/news/6717

2.Նար-Դոս, Երկեր, Երևան, Սովետական գրող, 1977

3.Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1987

4.Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, Լույս, 1975

6. Հ. Զաքարյան և Յու. Ավետիսյան, Հայոց լեզու: Շարահյուսություն, Երևան, Զանգակ 97, 2009

7.Հայոց լեզու, Հանրակրթական դպրոցի դասագիրք 8-րդ դասարանի համար, Երևան, Աստղիկ գրատուն, 2017